իւրեանց և զհարս: Բազումք դարձեալ խեղդամահ արարեալ զորդիս իւրեանց արկանեն զնոսա առաթուր արանց և երիվարաց. և այլք խեղդ մահու արկեալ 'ի պարանոց՝ կապին յեղջերս եզանց, և 'ի քարշ արկեալ 'ի նոցանէ սատակամահ կորնչին: Իսկ ոմն 'ի նոցանէ, գոչէր 'ի միջոյ իւրոցն.

«Ո՛ Հռովմայեցիք, ոչ ամենայն պարգևքդ ձեր եղեն մեզ աղետաբերք. յածել մեզ զշղթայս գերութեան, ետուք մեզ և երկաթ ազատութեան: Եւ զայս ասացեալ չոգաւ զորովս զիւրովլին:

Հասեալ իսկ էր վախճան ազգին փարամոնդի, եթէ երկինք ոչ զերծուցանէին զմնացորդս մարտկաց նորա, մեծամեծս թերևս պատրաստեալ նմա առ յապայս: Այլ ահա հողմն ուժգին շնչեալ ընդ հիւսիս և ընդ արևմուտս. դիմեն կոհակք յաւազուտս. եռան անդունդք 'ի փրփրադէզ և 'ի պղտոր ալիս մրրկացն զուգորէից՝ որ 'ի նահանգս անդ թուին իմն մղել զՈվկիան համատարած անդր քան զաւազածիր սահմանս իւր: Որպէս հզօր նիզակակից բարբարոսաց մտանէ ծով 'ի բանակ փռանկաց վանել անտի զՀռովմայեցիս: Ընկրկին նոքա յերեսաց զօրութեան ալեաց. փռանկք քաջալերին, և թուի իմն նոցա նհանգն ծովային, հայր իշխանին իւրեանց պատանւոյ՝ ելեալ 'ի կապուտակ քարանձաւէն՝ հասանել նոցա 'ի թիկունս: Նոքա յօգուտ 'ի կիր արկեալ զմեր շատ տագնապի՝ ընկրկեն վանեն զմեզ օգնելով ալեաց: Տեսարան իմն անօրինակ յապուշ կրթէր զաչս ամենեցուն. զի եղինք զարհուրեալք գնային 'ի լուղ զհետ ձգելով զայլս. եղջիւրք ևեթ նոցա կամակորք յերեսս կոհակաց 'ի վեր երևէին՝ բերելով զնմանութիւն բազմութեան վտակաց՝ հարկատուաց Ովկիանու: Անդ Սալիացիք իջուցեալ 'ի ջուր զնաւս իւրեանց կաշեայս, հարկանէին զմեզ 'ի հարուածս թիոց և խառնելեաց: Մերովեայ զասպար ոզորահիւս լայնատարր 'ի լաստ յօրինեալ, և ելեալ 'ի կոնքն պատերազմիկ՝ պնդէր զհետ մեր հանդերձ ընկերօքն որք իբրև զՏրիտոնս կայտառէին զնովաւ: Կանայք խօթամիտ խնդութեամբ զուարճացեալք, ծափ զծափի հարկանէին, օրհնելով զալիսն ազատարարս: Ամենայն ուստեք կոծեն ալիք զայրացեալք և ցայտեն ընդդէմ զինուց, ամենայն ուրեք անդնդասոյզ ընկլուզանին հեծեալք և հետևակք՝ սուսերաց ևեթ նոցա 'ի մկանունս ջուրց 'ի վեր երևեալ. և դիակունք, զոգցես իմն կենդանացեալք, թաւալին ընդ սէզ ընդ աւազ և ընդ ափն:

Մեծ թնդանօթ մը.

Միացեալ նահանգաց հոկտեմբեր ամսոյն լրագրին մէջ կը կարդանք որ 'ի Ֆօրդ–Համիլդըն, Ռոտման անունով թնդանօթին հանդէսը կատարուեր է և կատարելապէս յաջողեր է: Բերնին բացուածքը քսան մատնաչափ. 50 լիտր վառօդով լի, և ռումբ մը 1000 լիտր, կէս ժամ միայն տևեր է զայն լեցունելը: Ուղղութիւնը դէպ 'ի գետին ըլլալով ռումբը քառորդ մղոն հեռու ջուրը ընկեր է, շատ անգամ ոստոստմունքներ տալով: Փորձը երկրորդելով՝ առջինին կրկինը լեցուցեր են, ռումբը 1080 լիտր, որուն նման ինչուան հիմա չէ եղած. բաւական դիւրին միջոցներ չունենալով՝ ստիպուեր են շատ աշխատութեամբ պատրաստել, և թնդանօթին ուղղութիւնը 25° գետնէն բարձր բռնել, որ կրակ առած ահաւոր թնդիւն մը հանելով, գնտակը երեք ու կէս մղոն հեռու ձգեր է:

Ահաւասիկ աս է Ռոտման թնդանօթին չափը. ծանրութիւնը առանց սայլի 116497 լիտր. երկայնութիւնը 24 ոտք. բացուածքը 20 մատնաչափ, և սովորական վառօդին կշիռը 100 լիտր. ռումբին միջին ծանրութիւնը 1000 լիտր: